ՀԱՅԱՍՏԱՆԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԻՄՆԱՐԿՆԵՐԻ, ՏԵՂԱԿԱՆ ԻՆՔՆԱԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՄԱՐՄԻՆՆԵՐԻ ԵՎ ՀԱՆՐԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱՇԽԱՏՈՂՆԵՐԻ ԱՐՀԵՍՏԱԿՑԱԿԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՃՅՈՒՂԱՅԻՆ ՀԱՆՐԱՊԵՏԱԿԱՆ ՄԻՈՒԹՅՈՒՆ

ПРОФСОЮЗ РАБОТНИКОВ ГОСУЧРЕЖДЕНИЙ АРМЕНИИ

UNION OF STATE, LOCAL GOVERNMENT AND PUBLIC SERVICE EMPLOYEES OF ARMENIA

«06» փետրվարի 2024թ.

N 08-01

ՀՀ աշխատանքի և սոցիալական
հարցերի նախարար
պարոն Նարեկ Մկրտչյանին

Հարգելի պարոն Մկրտչյան

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի աշխատողների արհմիությանը դիմում են կենսաթոշակառու հանդիսացող բազմաթիվ քաղաքացիներ՝ կենսաթոշակը նշանակելու, ինչպես նաև հաշվարկելու տարատեսակ հարցերով, ինչի արդյունքում մենք արձանագրել ենք ստաժը հաշվարկելու և կենսաթոշակը վճարելու հետ կապված մի շարք խնդիրներ:

Ըստ այդմ, ՀՀ Սահմանադրության 42-րդ և 51-րդ հոդվածների և «Տեղեկատվության ազատության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածի համաձայն, խնդրում ենք տրամադրել տեղեկություններ՝

1. Կենսաթոշակ ստացող քաղաքացիներից քանի՞սն է մշտապես բնակվում Հայաստանի Հանրապետությունում:

2. Կենսաթոշակ ստացող քաղաքացիներից քանի՞սն է տարվա ընթացքում 180 օրվանից ավել ժամանակով գտնվում Հայաստանի Հանրապետությունից դուրս:

3. Վերջին երեք տարում կենսաթոշակ ստացող քանի՞ քաղաքացիների կենսաթոշակի վճարումն է դադարեցվել «Պետական կենսաթոշակների մասին» ՀՀ օրենքի 35-րդ հոդվածի 6-րդ մասով սահմանված կարգով բանկ չներկայանալու և Հայաստանի Հանրապետությունում գտնվելու մասին չհայտարարելու պատճառով:

4. Վերջին երեք տարում քանի՞ կենսաթոշակառուի կենսաթոշակի վճարումը վերսկսվել է դադարեցվելուց հետո համապատասխան դիմում ներկայացնելուց հետո:

5. Կենսաթոշակառուների թիվը, որոնց կենսաթոշակը նշանակելիս աշխատանքային ստաժում ամբողջությամբ չեն ներառվել աշխատանքային գրքույկում մինչև 2013թ նշված աշխատած ժամանակահատվածները՝ սխալ կամ ոչ հստակ

Հասցե՝ 0010, ք. Երևան
Վ. Սարգսյան 26/3, 501 ս.

Address: 26/3 V. Sargsyan st,
Office 501, Yerevan, 0010

Адрес: 0010, г. Ереван
ул. В. Саргсяна 26/3, офис 501

Tel: +37410580582 URL: www.arhmiutyun.org Email: profrosgu@gmail.com Facebook: facebook.com/arhmiut

գրառումների, ինչպես նաև սոցիալական վճարներ կատարելը կամ աշխատավարձ ստանալը հաստատող փաստաթղթերը չներկայացնելու պատճառով:

6. Համաձայն 2005 թվականի 12 մայիսի N 938-Ն որոշման՝ ձևավորվել է պետական կենսաթոշակային սոցիալական ապահովագրության համակարգում ընդգրկված անձանց տվյալների անհատական (անձնավորված) հաշվառման բազան: Առկա՞ են արդյոք այդ որոշմամբ ձևավորված բազաները:

Հարգանքով՝

Հայաստանի պետհիմնարկների, ՏԻՄ-երի

աշխատողների արհմիության

նախագահ **Ա. Ասատրյան**

հաստատված է էլ
ստորագրությամբ - Ա
Ասատրյան